Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«13» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2013 Թ. N 34-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում անցկացված ծառայողական քննության արդյունքներով ներկայացված եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանի միջնորդությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու, 2013 թվականի հոկտեմբերի 17-ից ծառայության չներկայանալու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պահպանության ապահովման բաժնի կրտսեր մասնագետ Կարեն Սամվելի Հայրապետյանի նկատմամբ կիրառել ծառայությունից ազատում կարգապահական տույժը և 2013 թվականի նոյեմբերի 13-ից նրան ազատել քրեակատարողական ծառայությունից:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ